ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ
ՀՅԴ ՀԱՅ ԴԱՏԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՀԱՎԱՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ
(Բրյուսել, Բելգիայի Թագավորություն, 9 նոյեմբերի, 2019 թ.)

Արցախի Հանրապետության մեծարգո նախագահ տիար Բակո Սահակյան,
Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա,
Հայ Դատի հանձնախմբի մեծարգո անդամներ,
Սիրելի հավատավոր զավակներ Մեր,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում ենք ձեզ և հղում Հայրապետական Մեր օրհնությունն ու սերը Հայ դատի հանձնախմբի գրասենյակի կողմից կազմակերպված այս հավաքի առիթով: Գնահատելի են աշխարհի տարբեր երկրներում, միջազգային ու պետական հարթակներում ներդրած ձեր նվիրյալ ջանքերը Հայոց Ցեղասպանության ճանաչման ու դատապարտման, Արցախի հիմնարար իրավունքների պաշտպանության, ինչպես նաև Մերձավոր Արևելքի հայության առջև հառնած խնդիրների լուծման ուղղությամբ:

Ազգամիջյան ու կրոնական տարբեր հակառակություններով մտահոգ արդի աշխարհում համազգային մեր խնդիրների բարձրաձայնումը և պաշտպանությունը սոսկ քաղաքական գործունեություն չէ, այլ մեր ժողովրդի լուսավոր գալիքի տեսլականով բարձր առաքելություն: Այս գիտակցությամբ մեր շուրթերից հնչող խոսքերը պետք է կնքվեն արդյունաշատ գործերով, անցյալից եկող ավանդները տարածվեն ապագայում՝ ներկայի մեջ դառնալով պատասխանատվություն ու պարտականություն: Գոհունակություն է Մեզ համար հաստատել, որ միջազգային կառույցների, տարբեր պետությունների և կազմակերպությունների կողմից Հայոց Ցեղասպանության ճանաչման ու դատապարտման իրողության մեջ տեսանելի է մեր ժողովրդի հավաքական ներուժի դրսևորումը: Մեզ բոլորիս քաջալերում է Հայոց Ցեղասպանության շարունակական ճանաչումը, քանզի հայ ժողովրդի նկատմամբ արդարության իրագործումը էական է ավելի արդար ու խաղաղ աշխարհի կառուցման համար: Հայոց Ցեղասպանության ճանաչման պայքարը ընտրություն չէ մեր ժողովրդի համար, այլ մեր լինելիության անբաժան մասը, մեր աննահանջ հանձնառությունը: Մենք ամենքս նույն տեսիլքն ունենք՝ մեր պատմության մեջ բացված Ցեղասպանության դառնագույն էջը եզրափակել մեր պահանջատիրության հաղթանակով, պաշտպանված ու զորեղ, բարօր ու զարգացող դարձնել մեր հայրենիքը և ապահով, շեն ու կենսունակ պահել սփյուռքը: Այս նպատակների համար մեր ժողովուրդը մեծ զոհողություններ է հանձն առել, միավորվել ազգաշահ ու

հայրենաշեն ծրագրերի շուրջ, որոնցում կարևոր դեր են ունեցել նաև ազգօգուտ նախաձեռնություններին ի նպաստ կազմակերպվող դրամահավաքները: Այս դրամահավաքը ևս կարևոր ներդրում պիտի լինի Հայ դատի գրասենյակների ազգանվեր գործունեության մեջ:

Միրելինե՛ր, արդարության ու ճշմարտության, խաղաղասիրության արժեքները, եղբայրսիրության, հայրենասիրության ու միաբանության ոգին մեզ միշտ զորություն են տալու, մեր բազկին՝ ուժ, և մտքին՝ իմաստություն: Այդ արժեքներով պիտի շենացնենք մեր հայրենիքը, կենսունակ պահենք սփյուռքը, հույս ու ապավեն դառնանք և նեցուկ լինենք միմյանց՝ դժվարությունները հաղթահարելու և մեր իղձերն իրագործելու: Այս է Մեր Հայրապետական պատգամը ձեզ և համայն մեր ժողովրդին, որպեսզի միասնաբար կյանքի կոչենք ազգային առաջընթացի և լուսավոր ու պայծառ գալիքի մեր տեսիլքները: Վերստին Մեր գնահատանքն ու լավագույն բարեմաղթանքներն ենք բերում Հայ դատի հանձնախմբերի ու գրասենյակների նվիրյալ անդամներին: Աղոթում ենք, որ Տիրոջ զորակցությամբ նորանոր հաջողություններով պսակվի Հայ դատի ազգաշահ առաքելությունը:

Բարի և արդյունավոր ընթացք այս նախաձեռնության աշխատանքներին:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ